

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 30/16

25 նոյեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Գավառի Սննդարտ» ՍՊԸ 20.10.2014 թ-ի դիմումով բերված միջնորդությունը ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ:

#### **«Գավառի Սննդարտ» ՍՊԸ կողմից բերված փաստարկները.**

Դիմումատուն հայտնում է, որ Գավառի ՏՀՏ-ից ստացվել է ծանուցագիր, համաձայն որի ընկերությունը 2013 թ-ին չի կարող համարվել ԱԱՀ վճարող, քանի որ գծ հայտարարության փոխարեն ներկայացվել է ոՅ հայտարարությունը: Ըստ դիմումի, նշված հայտարարությունը սխալ է ներկայացվել թյուրիմացության արդյունքում:

Ընկերությունը 2013 թ-ի ողջ ժամանակահատվածում պատշաճ կերպով ներկայացրել է ԱԱՀ-ի հաշվարկներ, հաշվառումը վարել է ԱԱՀ-ի հաշվառման դաշտում, չունի չկատարված հարկային պարտավորություններ:

Հետագա գործունեությունը չխաթարելու համար «Գավառի Սննդարտ» ՍՊԸ-ն խնդրում է 2013 թ-ին համարել ԱԱՀ վճարող:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Խնդրո առարկա հարցի վերաբերյալ Հանձնաժողովն բազմիցս արտահայտել է իր դիրքորոշումը, որը կայանում է հետևյալում:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարող է համարվում, մասնավորապես, որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող գրանցված իրավաբանական անձը՝ ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում նշված օրվանից մինչև հայտարարությունում նշած տարվա ավարտը, բայց ոչ շուտ, քան հայտարարությունը ներկայացնելու հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրացուցային օրվանից, եթե անձը կարող է համարվել շրջանառության հարկ վճարող, սակայն իր հաշվառման վայրի հարկային մարմինն վերադաս հարկային մարմնի սահմանած ձևով գրավոր հայտարարություն է ներկայացրել ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ:

Հայտարարության ձևը հաստատված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.02.2011թ. թիվ 51-Ն հրամանով (հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում 84-րդ ձև), որի ներկայացման դեպքում է միայն շրջանառության հարկ վճարող համարվելու պայմաններին բավարարող անձը համարվում ԱԱՀ վճարող: Նշված հայտարարությունը չներկայացնելու դեպքում անձը չի կարող համարվել ԱԱՀ վճարող:

ՀՀ կառավարության 04.08.2011 թ-ի «Ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 1104-Ն որոշմամբ սահմանված է հարկային մարմնում ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը, որի համաձայն՝ ԱԱՀ վճարող համարվող անձինք հարկային մարմին են ներկայացնում իրենց՝ որպես ԱԱՀ վճարող հաշվառելու հայտարարություն (հաշվետվությունների ներկայացման

